# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 1101 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 487 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի «Մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող քաղաքացիների և այդպիսի գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին հատկացվող արտոնությունների մասին» N 487 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի N 487 որոշմամբ նախատեսված արտոնություններից օգտվող անձինք շարունակում են օգտվել համապատասխան

արտոնություններից մինչև գործող աշխատանքային պայմանագրով կամ անհատական իրավական ակտով ծագած աշխատանքային հարաբերությունների դադարումը:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անձանց կողմից համապատասխան արտոնությունների հետ կապված ծախսերը կատարվում են համապատասխան պետական գաղտնիքը տնօրինող պետական մարմիններին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված անձանց համար սահմանված լրացուցիչ վարձատրությունն իրականացվում է անվանացուցակի, իսկ լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրումը՝ անհատական տեղեկանքի հիման վրա:

6. Սույն որոշման 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված վճարումները ենթակա են կատարման նշված ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ